Ներածություն

Այն երևույթը, որը մենք քննարկում ենք, կարելի է ներկայացնել երկու ծայրահեղությունների շրջանակներում՝ հերոսական և ողբերգական:
ԽՍՀՄ քաղաքական հետապնդումների են ենթարկվել ահռելի քանակությամբ մարդիկ, չկան հստակ տվյալներ և թվաքանակ: Բոլոր աղբյուրներում այդ թիվը տատանվում է և անհնար է ճշգրիտ ասել, քանզի եղել են բազում այնպիսի դեպքեր, երբ մարդիկ բռնադատվել են առանց գործ հարուցելու: Կան խմբակային գործեր, որոնցում քննվում է միանգամից տասնյակ մարդկանց գործեր և, իհարկե, բազում գործեր որոշ պատճառներով չեն պահպանվել:
Բոլորին անուն առ անուն հիշատակել և ուսումնասիրել գործնականորեն անհնար է տարբեր պատճառներով, սակայն դա չի խանգարում որպեսզի տասնյակ արխիվային փաստաթղթեր ուսումնասիրելով ընդհանուր պատկեր կազմել և ջրի երես հանել բոլոր նրանց կապող թելերը: Սակայն մինչ այդ շատ կարևոր է հասկանալ՝ ինչ է իրենից ներկայացնում բռնադատվածներ եզրույթը:

Հոդված 4. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) բռնադատված՝ Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող նախկին Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն այն քաղաքացին, քաղաքացիություն չունեցող անձը կամ օտարերկրյա քաղաքացին, ով խորհրդային կարգերի ժամանակաշրջանում (սկսած 1920թ. նոյեմբերի 29-ից, մինչև Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության փլուզումը) Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքական շարժառիթներով՝

ա. դատապարտվել է 1961 թվականի Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության քրեական օրենսգրքի նախկին խմբագրությամբ 65-րդ, 67-րդ, 69-րդ, ինչպես նաև 2061 -րդ հոդվածներով կամ 1927 թվականի Հայաստանի Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի քրեական օրենսգրքի նույն բովանդակությամբ հոդվածներով կամ նախկին Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն այլ հանրապետությունների քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով քաղաքական այլախոհությունը ճնշելու կամ սահմանափակելու նպատակ հետապնդող այլ հոդվածներով և հետագայում արդարացվել է,

բ. քրեական պատասխանատվության է ենթարկվել արտադատարանական կարգով,

գ. անօրինական կարգով ենթարկվել է բժշկական բնույթի հարկադրական միջոցների, բժշկական կամ գիտական փորձերի,

դ.արտաքսվել է նախկին Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության տարածքից կամ զրկվել քաղաքացիությունից,

ե. ազատազրկվել, աքսորվել կամ արտաքսվել է որպես բռնադատվածի ընտանիքի անդամ,

զ. ենթարկվել է վարչական աքսորի կամ արտաքսման,

է. ենթարկվել է անհիմն քրեական պատասխանատվության և նրա վերաբերյալ գործերը կարճվել են ոչ արդարացման հիմնավորումներով,

ը. ճանաչվել է սոցիալապես վտանգավոր և ազատազրկվել, աքսորվել, արտաքսվել է դատարանի կողմից կամ արտադատարանական կարգով՝ առանց այդ անձի նկատմամբ կոնկրետ հանցագործություն կատարելու մասին մեղադրանք ներկայացնելու,

թ. ծնվել է բռնադատված մորից՝ աքսորավայրում, արտաքսման կամ ազատազրկման վայրերում, հատուկ բնակավայրերում կամ դրանց ճանապարհին.

ժ. երեխաները, ովքեր աքսորավայրերում, արտաքսման կամ ազատազրկման վայրերում, հատուկ բնակավայրերում գտնվել են ծնողների հետ, ինչպես նաև մնացել առանց ծնողական խնամքի:

2) Բռնադատվածի առաջին հերթի ժառանգ՝ բռնադատվածի առաջին հերթի ժառանգ են համարվում ազատազրկման վայրերում մահացած կամ գնդակահարված և հետմահու արդարացված անձանց երեխաները, ամուսինը, կինը՝ եթե վերջինս կրկին չի ամուսնացել,

3) Բռնադատվածի ընտանիքի անդամ՝ բռնադատվածի ընտանիքի անդամ են համարվում բռնադատվածի առաջին հերթի ժառանգի կարգավիճակ ունեցող, ինչպես նաև բռնադատվածի առաջին հերթի ժառանգի կարգավիճակ չունեցող՝ բռնադատված անձի կինը, ամուսինը, զավակները:[1]

Այս հոդվածում կփորձենք ընդհանուր խճապատկեր ներկայացնել «բռնադատվածներ» երևույթի մասին և մեր կողմից ուսումնասիրված արխիվային մի քանի գործի, հարցազրույցների և սոցհարցման արդյունքների միջոցով ներկայացնել այն հիմնական խնդիրները, որոնք կապված են այս թեմայի հետ:

Գլուխ 1

Պատճառներ

Իհարկե կարելի էր թվարկել բազում պատճառներ, որոնք հանդիպում են արխիվային փաստաթղթերում, գրքերում և բռնադատվածների ժառանգների պատմություններում, սակայն այդ ամենը կարելի է ընդհանրացնել մեկ պատճառի մեջ՝ քաղաքական հայացքներ:
Հիմնականում հետապնդվում էին նրանք, ովքեր ըստ իշխանությունների վտանգ էին ներկայացնում Սովետական Միության համար, մարդիկ, ովքեր պայքարում էին իրենց ազգի անկախության և պաշտպանության համար: Ըստ սովետական իշխանությունների այսպիսի մարդիկ համարվում էին հանցագործ և անհրաժեշտ էր արմատախիլ անել անցագործությունը ԽՍՀՄ ողջ տարածքում: Սակայն երբեմն հանցագործ էին «դառնում» լրիվ անմեղ մարդիկ, ովքեր անգամ կապ չեն ունեցել ոչ մի քաղաքական խմբավորումների հետ, զուտ որևէ մեկի «донос»-ի պատճառով, քանի որ վերջինս ուներ իր անձնական շահը, իսկ հիմնականում այդ բանավոր խոսքը բավական էր մարդու հանդեպ քրեական գործ հարուցելու համար:
1949 թ.-ին բռնադատվածների մեջ նաև քիչ չէին այն մարդիկ, ովքեր երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ եղել են սովետական բանակում և գերի են վերցրվել գերմանական բանակի կողմից:

Գլուխ 2

Հետևանքներ

Ըստ տարբեր աղբյուրների՝ ունենք մոտ 7000-ից ավել միայն գնդակահարված և ահռելի քանակությամբ աքսորվածներ: Ոմանց հետագա ճակատագիրը աքսորից հետո մնաց անհայտ, ոմանք մնացին աքսորավայրում և այնտեղ ընտանիք կազմեցին (ինչը ևս մեկ անգամ, Ցեղասպանությունից հետո բերեց հայերի սփռմանը աշխարհով մեկ և նպաստեց Հայաստանում բնակչության պակասեցմանը), շատերը վերադարձան հայրենիք, բայց ապրեցին «բռնադատված» կնիքով՝ չկարողանալով լիովին հաստատվել իրենց գյուղում կամ քաղաքում, շատերը այս պատճառով կորցրեցին ընտանիք, աշխատանք և պայծառ ապագա կերտելու հնարավորություն, և բարեբախտաբար եղան այնպիսիք, ում կյանքը աքսորից հետո շարունակվեց բնականոն հունով:
Գյուղերում սկսվեցին ընտանիքների միջև թշնամանքներ՝ «донос» ներկայացնելու պատճառով: Իսկ նրանք, ում գնդակահարել էին, ավելի ուշ արդարացվեցին, սակայն նրանց ընտանիքների

ցավը դրանից չպակասեց, քանի որ «բռնադատված» կնիքից բացի ավելացավ նաև «բռնադատվածի ընտանիք» կնիքը, որի պատճառով բազում ընտանիքներ փոխեցին իրենց ազգանուններն ու բնակության վայրը՝ փորձելով թեկուզ այդ միջոցով իրենց ապահովագրել հետագա հետապնդումներից:
Անշուշտ հետևանքները այսքանով չեն վերջանում. հետևանքները բազում են և սարսափելի, սակայն բոլոր հետևանքներն էլ բխում են վերոնշյալ օրինակներից:

Գլուխ 3
Ժամանակաշրջանում հաճախ հանդիպող երևույթներ

Ուսումնասիրությունների ընթացքում հաճախ հանդիպում է այնպիսի երևույթ, որն ընդունված է անվանել «донос», երբ մեկ անձը մյուսի մասին ցուցմունք էր տալիս, և դա հիմք էր դառնում վերջինիս նկատմամբ գործի հարուցման, որն էլ բերում էր հետագա աքսորման կամ գնդակահարման, ինչն էլ իր հերթին հաճախակի բերում էր երկու ընտանիքների միջև թշնամանքի: Արխիվային փաստաթղթերում հաճախ ցուցմունք տված անձի անուն-ազգանունը գաղտնի չէ և վկայությունը գործի հարուցման փաստացի հիմք է:

Հաճախ կարելի է հանդիպել նման տողերի.

«Ըստ Ալեքսան Կոստանդյանի գործի՝ վերջինս լինելով դաշնակ և օգնելով դաշնակցություն կուսակցությանը տարածելու հակախորհրդային գրականություն, որը նրան տրամադրել է քահանա Տեր Գրիգոր Տեր Գրիգորյանը: Ունեցել է ճառ, ըստ որի նա դաշնակցության շարքերում գտնվող երիտասարդներին փորձել է համոզել ետ կանգնել դաշնակցության գործունեությանը մասնակից լինելու մտքից, և օրինակը բերել է այն, որ քահանա Պատվական Տեր-Կիրակոսյանի դաշնակացական ակտիվ գործունեությունից հետո նրան ձերբակալեցին, նրա ընտանիքը ապրեց խիստ աղքատ վիճակում, իսկ դաշնակցություն կուսակցությունը նրանց չէր օգնում, և այդ ամեն խոսքերը ուղղված էին Արտաշես Դավիդյանին, և իհարկե բոլոր մյուս երիտասարդ գործիչներին:

Ճառից հետո ոմանք համաձայնվել են նրա հետ և որոշել են լքել դաշնակցություն կուսակցությունը, ներառյալ՝ Արտաշես Դավիդյանը:

Տեր Թալանը ճառից հետո խփելով Արտաշեսի ուսին ասել է

- ***Ահա իմ իսկական ընկերը, սիրում եմ նման տղաներին:***

Երկու անգամ փորձել են սադրանքի ենթարկելով վերբովկայի ենթարկել Ալեքսան Կոնստանդյանին, սակայն չի ստացվել»:[2]

Այս տողերը ցույց են տալիս այն երևույթը, երբ «донос»-ը լինում էր բառացի, նույն խմբավորման մասնակիցներից մեկի կողմից մյուսի նկատմամբ, սակայն ցուցմունք տվողի անունը լինում էր գաղտնի:
Այնուհետև նույն գործի մեջ հանդիպում ենք նման տողերի.

«Որոշ փախստականներ հրավիրել էին ժողով, որին մասնակցում էին դաշնակցության անդամներ, որոնց շարքում էր նաև Ալեքսան Կոստանդյանը, և այլ փախստականներ թե՛ դաշնակցության շարքերից, թե՛ դուրս, և այն առաջարկը՝ ստեղծել կամավորական բանակ խորհրդային կառավարության դեմ զենքերով ապստամբելու համար՝ դաշնակները մերժել են, և դրանից հետո նրանք, ովքեր համաձայնվել էին, նրանք էլ սկսեցին մերժել:

Հովսեփ Բաբայան, Հարություն Մարտիրոսյան, Գինոս Հարությունյան, Խաչի Աբրահամյան, Անտոն Տեր Գրիգորյան, Մելիքսեթ Խաչիկի, Արշակ Բեջանյան, Հայկ Նավասարդյան:

Շիշկերտի մերձակա լեռան վրա տեղի ունեցած ժողովին՝ 1936 թ.-ի մասնակիցների անունները:»[3]

Այս երևույթը ևս բարդացնում է բռնադատվածների անձնական գործերի ուսումնասիրության գործընթացը, քանի որ հաճախ գործը կազմվում էր մեկ անձի անունով, տվյալ դեպքում՝ Ալեքսան Կոստանդյանի, սակայն նույն գործի փաստաթղթերով նաև քննվում էին մի շարք այլ մարդկանց գործեր, և արխիվային փաստաթղթերում անհնար է գտնել նրանց անուններով գործեր:
Արխիվային փաստաթղթերում հանդիպում են նաև այնպիսի դեպքեր, երբ քրեական գործ հարուցվում և քննվում էր զնդակահարումից հետո, ինչը չունի ոչ մի տրամաբանական բացատրություն և օրինական չի կարող համարվել:
Եվ իհարկե, հայտնի են դեպքեր, երբ մարդուն զնդակահարում են առանց որևէ քրեական գործի և անգամ զնդակահարումից հետո չի հարուցվում գործ:
Այս ամենը չափազանց ցավալի փաստեր են, քանի որ կամա թե ակամա համեմատականներ են տարվում ցեղասպանության հետ՝ գիտակցելով թե ինչ ապօրինի ու անհիմն զնդակահարություններ և աքսորումներ են եղել:

Գլուխ 4

Ուսումնասիրության խնդիրներ

Պատմություն ուսումնասիրելը կարևոր է. եթե ազգը չիմանա իր անցյալը, ապագայում չի կարողանա հաղթող դուրս գալ նույն մարտահրավերում: Պատմությունն ուղղակի դեպքերի հաջորդականություն չէ, որը մնացել է անցյալում: Պատմությունը նման է բանալիի, որը լավ ուսումնասիրելու դեպքում անհրաժեշտ պահի կարող է հուշել, թե որ դուռն է պետք բացել, որպեսզի խուսափել անցյալի սխալներից և ողբերգություններից:

Բարեբախտաբար մենք ապրում ենք այնպիսի ժամանակաշրջանում և երկրում, որտեղ կա խոսքի ազատություն և տեղեկատվական մեծ բազա:
Յուրաքանչյուր ցանկացող կարող է ուսումնասիրել իր պապերի պատմությունը, ով ենթարկվել է բռնադատման: Ուրախալի է գիտակցել, որ այդ տեղեկատվությունը հասանելի է, սակայն կան այնպիսի խնդիրներ, որոնք ուղղակի լուծելի չեն:
Իհարկե Հայաստանի Ազգային Արխիվում, ինչպես բազմիցս նշել է արխիվի տնօրեն Ամատունի Վիրաբյանը, չկան բռնադատվածների հետ կապված փաստաթղթեր, որոնք գաղտնի են[4]: Դա միանշանակ այդպես է: Պարոն Ամատունի Վիրաբյանը բազմիցս մեզ անձամբ օգնել է մեր հետազոտություններում և տվել անհրաժեշտ խորհուրդներ ու տվյալներ, սակայն կան խնդիրներ, որոնք հնարավոր չէ լուծել միայն Ազգային Արխիվի ուժերով:

Ուսումնասիրության ժամանակ Հայաստանի Ազգային Արխիվում հանդիպում ենք առաջին խնդրին. դիմորդին հետաքրքրող անձի գործը համար, պետք է փնտրել նրա անունը տասից ավել մատյաններում, որոնք ոչ մի կերպ դասակարգված չեն, չկա այնբբենական կարգ, չկա տարեթվերի հերթականություն. պարզապես պատահականության սկզբունքով գրված են անուններ:
Ծախսելով մի քանի օր և փնտրելով հետաքրքրող անունը, հնարավոր է ոչինչ չգտնել, քանի որ տվյալ մարդու գործը ներառված է խմբակային գործի մեջ, ինչպես նշված է նախորդ գլխում: Հետևաբար, եթե դիմորդը չիմանա իրեն հետաքրքրող մարդու «հանցակիցների» անունները, երբեք չի կարողանա գտնել նրա գործը:
Եթե նույնիսկ կարողանա գտնել իրեն հետաքրքրող մարդու գործը, պատվիրի այն, հնարավոր է, որ հաջորդ օրն արխիվում ստանա պատասխան, որ տվյալ գործը հնարավոր չէ տրամադրել, քանի որ այն վնասվել է Գետառի վարարման ժամանակ(Գետառի վարարումների թվականներից կարելի է նշել՝ 1860, 1866, 1873, 1908, 1912, 1923, 1924, 1925, 1928, 1946, 1947, 1950 թթ. հեղեղել են

Երևանը: Մասնավորապես 1946 թվականի մայիսի 25-ի վարարումը, որի ժամանակ ջրի ծախսը ավելացել էր 100 անգամ, մեծ վնաս է հասցրել Երևանին):[5]

Գլուխ 5
Լուծումնե՞ր

Անիմաստ է խոսել ուսումնասիրությունների առաջ ծառացող խնդիրների լուծումներից, քանի դեռ ՀՀ Կառավարության կողմից լիովին մոռացության և անուշադրության է մատնվել բռնադատվածների խնդիրը:
Այո, ունենք ընդունված օրենք Բռնադատվածների մասին, որը ուժի մեջ է մտել 2020թ.-ի հունվարի 1-ից, ունենք Խորհրդային ժամանակների Բռնադատվածների հիշատակի օր և հուշահամալիր(ուր կարելի է այցելել միայն Հունիսի 14-ին), ունենք անհատներ և խմբեր ովքեր զբաղվում են այս թեմայի ուսումնասիրմամբ, ունենք հայոց պատմության 9-րդ և 12-րդ դասարանների դասագրքեր, որտեղ շոշափվում է այս թեման:

Բայց այս ամենն արդյո՞ք բավական է:

Գլուխ 6
Սոց. հարցում

Մեզ սկսեց հետաքրքրել, թե ինչքանով են տեղեկացված ՀՀ քաղաքացիները այս թեմայի մասին, և արդյո՞ք օրենքը, հիշատակի օրը, հուշահամալիրը, դասագրքերը և ուսումնասիրությունները հասել են իրենց նպատակին, թե՝ ոչ: Սա պարզելու համար մենք անցկացրեցինք հարցում, որի շրջանակներում Երևանի կենտրոնում զբոսնող 20-40 տարեկան 100 հարցվածներից ստացանք ահա այսպիսի արդյունք.

Հարցերը հետևյալն էին՝

1. Գիտե՞ք արդյոք՝ ինչ օր է հունիսի 14-ը
2. Ծանոթ ե՞ք «բռնադատվածներ» երևույթին
3. Հիշում ե՞ք դպրոցական ծրագրից այս թեման

	Այո	Ոչ

Հարց 1	**1%**	**99%**
Հարց 2	**12%**	**88%**
Հարց 3	**9%**	**91%**

Հարցումից առաջ մենք վստահ էինք, որ չենք ստանա նման տխուր պատկեր, սակայն թվերը չեն ստում:

Ստացվում է այնպես, որ կառավարության կողմից այս թեման մնացել է միայն թղթի վրա: Այո՛, դպրոցում 9-րդ և 12-րդ դասարանների դասագրքերում կա անդրադարձ այս թեմային, բայց այն չունի ոչ մի գրամ արժեք, քանի որ այդ թեման հաճախ կամ ուղղակի անտեսում են կամ ներկայացնում երկու բառով:[6]

Հիշատակի օրվա մասին գիտեն միայն այն մարդիկ, ովքեր զբաղվել կամ զբաղվում են այս թեմայի ուսումնասիրությամբ: Հեռուստաընկերությունների կողմից այս թեման չի լուսաբանվում ընդհանրապես կամ լուսաբանվում է բավարարվելով միայն մեկ տողով:

Հանդիպեցինք միայն երկու հոգու, ովքեր տիրապետում էին այնպիսի տեղեկությունների ինչպիսիք էին տարեթվեր(1937, 1949 և այլն), բռնադատման պատճառներ և թե ուր էին աքսորում մեծամասնությանը(Ալթայի մարզ), և նրանցից միայն մեկը գիտեր, թե ինչ օր է Հունիսի 14-ը և գոյություն ունի Բռնադատվածների հուշահամալիր:

Հարկ ենք համարում նաև նշել, որ շատերը լսելով «բռնադատված» բառը, այն շփոթում են «քաղբանտարկյալ» բառի հետ: Չենք ժխտում, որ կան ընդհանուր գծեր այս երկու երևույթների միջև:

Այսքան տարիների ընթացքում բոլորի կողմից(այդ թվում նաև մեր) իրականացված ուսումնասիրությունները չեն ստացել երբևէ անհրաժեշտ ուշադրություն և առավել ևս արձագանք:

Մենք ունենք բռնադատվածների մասին օրենք, սակայն այդ օրենքի մասին գրեթե չի եղել լուսաբանում:

Հարցման ժամանակ նաև հարցրեցինք, թե ինչ աղբյուրներից են ծանոթ այս թեմային: Ոմանք տեղյակ էին միայն այն պատճառով, որ ունեն ազգական, ով այդ տարիներին ևս ենթարկվել է բռնադատության, և նրանցից քչերն են ինչ-որ բան հիշում դպրոցական դասերից, մյուսները՝ ոչինչ չեն էլ հիշում այդ թեմայի մասին դպրոցական կամ համալսարանական դասերից:

Այս ամենն ուղղակի սարսափելի է: Բավական է միայն պատկերացնել, թե ինչ կլիներ, եթե նման կերպ մոռացության մատնվեր Հայոց Ցեղասպանության հարցը: Հարկ է նշել, որ այս երկու իրողություններն ունեն բազում ընդհանրություններ:

Ստեղծվում է այնպիսի տպավորություն, որ այս հարցի ուսումնասիրմամբ զբաղվող մարդիկ այն անում են կամ ուղղակի իրենց համար կամ նեղ շրջանակի՝ ովքեր նույնպես զբաղվում են այս հարցի ուսումնասիրությամբ: Ցավալի է տեսնել այսպիսի վիճակագրություն:

Գլուխ 7
Հնարավոր լուծումներ

Չափազանց բարդ և երկարատև գործընթաց է անհրաժեշտ, որպեսզի դուրս գանք նման ճահճացած իրավիճակից:

Անհրաժեշտ է սկսել ահռելի գիտահետազոտական ուսումնասիրություն, կազմել հստակ իրադարձությունների քարտեզ, որտեղ պետք է նշվեն բոլոր առանցքային դեպքերը, կարևոր անհատները, քաղաքական դրդապատճառները, ժամանակաշրջանի կողմից թելադրվող օրենքներն ու երևույթները: Անհրաժեշտ է հստակ և անկողմնակալ ուսումնասիրություն, ինչի համար անհրաժեշտ է ուսումնասիրել տասնյակ հազարավոր արխիվային փաստաթղթեր, ինչը ֆիզիկապես անհնար է, եթե չլինի մեծ խումբ: Այնուհետև այդ ուսումնասիրությունները ի մի բերել և խմբագրել, այն դարձնել էլեկտրոնային, ինչը նույնպես մեծ աշխատանք է:

Այդ ողջ գործընթացից հետո այն ներառել կրթական համակարգում, դասագրքերում և տեղեկատվական կայքերում, այդ նյութի հետ ծանոթացնել պատմության ուսուցիչներին և դասախոսներին:

Կառավարության կողմից սկսել ավելի մեծ ուշադրություն դարձնել այս թեմայի ուսումնասիրմանը և լուսաբանմանը՝ կրթական և լրատվական լծակների շնորհիվ:

Այնուհետև ստեղծել աշխատախումբ, որը կզբաղվի Հայաստանի Ազգային Արխիվի մատյանների թվայնացմամբ, դասակարգմամբ՝ ըստ անվանական և տարեթվային կարգի:

Սակայն այդ փուլում առաջանալու է շատ մեծ խնդիր. նախևառաջ ահռելի քանակությամբ փաստաթղթերից պետք է հասկանալ՝ որն է ինչ, ինչ պատճառովէ անհասանելի կամ ոչնչացված, և դրանք առանձնացնել էլեկրոնային մատյանում որպես անհասանելի: Բացի այդ անհրաժեշտ է նաև ուսումնասիրել բոլոր խմբակային գործերը և ավելացնել մատյաններում այն մարդկանց անունները, որոնք բացակայում են այնտեղ և հղում տալ խմբակային գործի վրա:

Միայն այսպիսի քայլերը կնպաստեն նրան, որ բռնադատվածների ժառանգները հետաքրքրվեն և ուսումնասիրեն իրենց ծնողների անցյալը և ստանան ՀՀ Բռնադատվածների մասին օրենքով նախատեսված փոխհատուցումը և օգտվեն իրենց հասանելի արտոնություններից:

Եզրակացություն

Այս ուսումնասիրություններից հետո պարզ է դառնում, որ ունենք խնդիր, որը թվում է ուսումնասիրված: Ստեղծվել է թվացյալ խաբկանք, որ այս թեմային տրվում է կարևորություն և ուշադրություն, սակայն գործնականում այն կոպտորեն դուրս է մղվել առաջնահերթ պատմական իրողությունների ցանկից:

Փորձեցինք հնարավորինս պարզ ներկայացնել երևույթը, դրա պատճառներն ու հետևանքները, ի ցույց դնել ուսումնասիրությունների խնդիրները և դրանց լուծման անելանելիությունը: Սակայն հարցումն անցկացնելուց հետո եկանք այն եզրահանգմանը, որ լուծում կա, սակայն այն ավելի շատ հիշեցնում է ուտոպիական գաղափարներ:

Նման մասշտաբի ուսումնասիրություններ անցկացնելու համար անհրաժեշտ են մարդկային և ֆինանսական ահռելի ռեսուրսներ:

Միայն կրթական համակարգում մի խումբ մարդկանց շնորհիվ, ովքեր անտարբեր չեն այս թեմայի նկատմամբ, հնարավոր չէ կատարել հետազոտական հեղաշրջում: Նրանք չեն կարող ամիսներ և տարիներ տրամադրել սեփական ուժերով այս խնդրի լուծմանը: Գործնականորեն անհնար է իրականացնել այսպիսի մասշատաբյին աշխատանք, եթե չլինեն ֆինանսավորողներ և աշխատանքները համակարգող հաստատություններ:

Կարելի է ասել, որ ամբողջովին մոռացության է մատնվել մի ողջ պատմություն, հերոսական պայքար և ողբերգական ճակատագրեր, պատմություն, որի ընթացքում մենք կորցրեցինք բազում

մտավորականներ, ռազմիկներ և հասարակ գյուղացիներ՝ առանց որոնց անհնար է պատկերացնել որևէ ազգի կյանք: Ունենք փաստաթղթեր, որտեղ Գարեգին Նժդեհին անվանում են հանցագործ[7], ունենք բազում գյուղացիներ ովքեր աքսորվել կամ գնդակահարվել են իրենց սեփական գյուղի և օջախի պաշտպանության համար, չգիտենք բազում մարդկանց հետագա ճակատագրեր, և այս ամենը՝ միայն Սովետական իշխանության շահերից ելնելով:

Եթե մենք չուսումնասիրենք և վերջնական պատկերացում չկազմենք այս թեմայի մասին, ապա խոսք անգամ չի կարող գնալ պատմությունից դաս քաղելու մասին: Քանի դեռ այս երևույթը քչերին է ծանոթ և հաշված մարդիկ են զբաղվում վերջինիս ուսումնասիրությամբ, ապա մենք կանգնած ենք դրա կրկնման վտանգի առաջ: Երևույթը չի կորել և ապագայում կարող է կրկնվել փոքր ինչ այլ մեթոդներով և ստանա լրիվ ուրիշ զարգացում, որը կանխագուշակել անհնար է: Ցավոք սրտի այս խնդիրը այդպես էլ կմնա նեղ շրջանակների ուսումնասիրությունների համար և չի ստանա անհրաժեշտ ուշադրություն:

Իսկ ի՞նչ ունենք մենք հիմա.

Անտեսված ցեղասպանություն:

Աղբյուրներ՝

1. Հայաստանի Հանրապետության օրենքը Բռնադատվածի կարգավիճակ ունեցող անձանց իրավունքների և սոցիալական պաշտպանության մասին https://bit.ly/3iKYrDC
2. Հայաստանի Ազգային Արխիվ Ֆոնդ 1191, ցուցակ 9, գործ 2352, էջ 2:
3. Հայաստանի Ազգային Արխիվ Ֆոնդ 1191, ցուցակ 9, գործ 2352, էջ 4
4. https://bit.ly/3eb0OfD
5. https://bit.ly/2Cega5I
6. https://bit.ly/3ecrn4b էջ 64-67, 108-111 https://bit.ly/2Z8gY58 էջ 8-15, 26-28
7. Հայաստանի Ազգային Արխիվ Ֆոնդ 1191, ցուցակ 9, գործ 2352

Հեղինակներ՝

Վահե Ղարիբյան

Իզաբելլա Խանզրատյան

Աշոտ Տիգրանյան